Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, մարտի 21-ին. Թիֆլիս. №12

ՆՒԷՐ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՒԱՔՈՒԱԾ, ՀԱՒԱՔՒՈՂ,
ԵՒ ՀԱՒԱՔՈՒԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՒԱՔՈՂՆԵՐԻՆ



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

## «ԳԵՆԵՐԱԼՆԻ» ԶՕՐԱՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԱՔՉԻՆԵՐԻ

*—Հասան, («Գործ») ոտքդ ուղիղ դիր, ձեռքիդ շիշը գեն ձգիր»*

*—Աղա, բա Հուսէյինը («Մշակ») ինչու ուղիղ չի դնում ոտք, դու մենակ ինձ ես տեսնում։*

Կովկասեան Բիւրօ.

## ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՋՐԱԲԱՇԽԱԿԱՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
### ԹԻՖԼԻԶՈՒՄ



ԳԻՏՈՒՄ ԵՆ ԿՈՒՐԻ ՋՈՒՐԸ

*Ընդամենը.—Այս ջրի մէջ բացի մեզանից ամէն ինչ կայ*

## ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ



*Սինոդի կարգադրութեամբ ճեմարանի լ ւ ա ց ք ի ծախքը կրճատ-ւած է, աշակերտները այժմ պէտք է և լւացարարութիւն սովորեն։*

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է    4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի    ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ



Գ Օ Գ Օ Լ

(Ծննդեան հարիւրամեակի առթիւ)

## ՊՕԼԻՏԻԿՈՒՐԻ ԱՃԽՐՔԵՄԷՆ

I

Չունքի մարտ ամիսն է, ընդու համա էլ պօլիտիկուրի իրգնքի վրեն սեվ սեվ ամպերը խան էսենց են գալի, խան էնենց են գնում. օրէկան իրեք չէր խան անձրեւ է գալի, խան արեգագ է անում ու՝ խանդխա-խան էլ, էնենց քամի է վիեկնում, վուր Կօստա Խատխովին կու մոռանար։

Չունքի ապրանքը՝ մալը հիմի չէնանում է, ու չունքի իսպանախ, լոբին ու սխտորը ուփրո էժան է, քանց թէ սուկին ու գառան միսը, խալխը նուր մէկանց պաս պահիլ կցից ու ուզում են, վուր խնդիրք գրեն էջ-միածնի Սինօթին, թէ ինչ է մինձ պասը մէ քիչ էրգարացնին։

Հիմի պաս են պահում էն բոլոր մինձ մինձ խօսողները, վուր էրկու տարի առաջ ասում էին, թէ պասն ինչ է ու Աստուծը վուրդի է։

Ամա դրա տեկաստ հիմի պաս են ուտում ու Աստուծն էլ մոռացել են, մեր տէր-տէր-վարթապետ.-էպիսկոպոսները։

Ու թէկի օրինեն հարցնում ես, խիմա է պաս պահում։

Ասում են՝ պիտինք հաղորթէլ, կօսէ՝ խառնակութենքին ճամփեմէն դուս էկանք ու հիմի անհնում ենք, վուր պաս պահիլը կօսէ, ուփրո դայրաթաւոր բան է, կօսէ, քանց թէ մէ գլուխ միս ու ձուգ ուտիլը։

Բանը էս թաւուր է միգ մօդ, Ռուսէթումը, Կաւկազումը ու մախսուզ՝ մեր պետալծ Թիփլիզ քախկումը։

II

Գուրձը ուրիշ թաւուր է Ղզլբաշի երգրումը։

Շահ իրա չախը չի կորցնում ու խալխն էլ իրանն է ուզում։

Արի ու էշը ցխեմէն հանիր։

Մեր Պանոֆն էլ պակաս դոշաղութեններ չէ անում։

Համա էս էրկու ամիս կուլի, Սատթարխանը էլ չի էրեւում։

Հայրաթ գնացել է փլաւ ուտելու։

Ղզլբաշի երգրում գուզեն, վուր Շվեյցարի համգի ազատութեն մոգանի ու հիմի Թիփլիզում ու Բաքւում ինչ վուր շ վ է յ ց ա ր ն ի ր կէին, գիփ էնդի են գնացել։

Մէ վուխտ ասում էին, Շահը փախել է կօսէ, իժում էլ ձէն ուլին թէ Շահը նարայու է էլի կօսէ։

Էստունք գիփ քամիք դուս էկաւ, չունքի, մարտ ամիսն է էլի հիմի։

Ապրիլն էլ սուտ դուս գուքայ ու բանը վուր թօայ մայիսին, մայիսն էլ խօ գիդէք ինչ թաւուր զօրութին ունէ. Շահը՝ մէ Շիրազ կէհայ, մէ ջէր էլի օրթունք կուտէ ու կօնցիտուցիա կու գցէ Իրան-Թուրանում, իժում ցուրտը վուր կու ննդնի, նուր մէկանց էլի Լեախովխպուչինը կու բռնի ու.... Մէջլիսը պաչինկա անիլ կու տայ... զարրադնէքով։

III

Բալկաններու կուրը գուրձը ուփրօ ուրիշ թաւուր է. Հասի մէ վախտ ասում ին թէ փայինայ կուլի, մէ նմուտից էղնէն էն ին ասում, թէ չի ըլի կօսէ։ Կուլի ըլի կօսէ, կուլի վուր էլ չի կօսէ։

Մէ Բարօն էրէնտայ է էլի, խիստ մուտտայ օրմին է էլի։

Էտ Աւստրօի հրդրուճ է էլի։

Համա սերբերի մէջն էլ ցանցառնիր քիչ չին էլի. Սերբերի թաքաւուրի աղէն, իրան իրան թաքաւուրութենի նաալէղնիկութենից ձեռք է քաշի։

Ախմախ Կարապիտ։

Նա էս թաւուր անդերձ է գրի՝ չունքի, կօսէ, ինձ համա ասում ին, վուր միթօմ իմ բէջին կրնգներովս ադանիլ իմ կօսէ, ու չունքի էտ բանը աշխարայ սուտ է կօսէ, բաս իս էլ ձիր թաքաւուրը չիմ ուզի ըլի կօսէ։

Ա՜յ թէ էս թաւուր ժաժ գար միր Ղրղզաչի Շահ, Մահմէդ Ալին, իս ու իմ հաքին, մէ մէնդալ էլ միր սակուդար փէշտաով, իս կուտայի իրեն։

Իժում գնային ու Ղզլբաշի համշարիքը իրենց համա նուր Շահ ջոգէին։

IV

Բուլղարները կնիազն էլ թաքաւուր էլաւ ու Սուլթնի հէդ կօսիս թէ բարբշեց. համա հիմի գուրձը նրա մէջն է, վուր Աւստրիա վուչ անէ, ամէն մէ կնիազ վուր էստուր էղնէն վիկենայ ու իրեն թաքաւուր կանչէ՞, ամ, էտ իս տաալ մէ շայի կուդառնայ։

Սուլթանն էլ տեհաւ, վուր հիմի բանը փուղի մէջն է, փիկալաւ մէ հարիր միլիօն ու իրա համա յէդ կադնից բուլղարներու հէդ կանեցաւ։

Լաւ էլ արաւ։

Տօ ինձ վուր հարիր թումանն էլ տային, իս՝ էն չափն էլ դարաւլ կուլէի։ Վա՛յ դարդիս, թէ բուլղարներումը, ան Օսմանլի հուգերումը հարիր թաքաւուր կուլի։

Մէ խալխ ինչ ուզում է, էն էլ պիտի ըլի։

Ուզում է թաքաւուր—թաքաւուր ըլի։

Ուզում է կնիազ—կնիազ ըլի։

Ուզում է կաթոլիկուս, թող կաթոլիկուս ըլի. իս ինչ իմ կորցնում։

Մէ վախտ վրացստանում, կնիազն ու թաքաւուրները խիարու հանցի էին էլի. ջէր Իմէրեթումը հիմի էլ ազնաւուրներն ու կնիազները տասնուչուրսը մի շահի ին։

Վերջը բուլղարներումն էլ էտէնց կուլին։

Ա՜յ, կու տեհնիք թէ չէ։

Հիմի ջէր մարտն է։

Ապրիլը սուտ կուլի ու մայիսին տէհէք թէ ինչիր կուլի։

Մաշ։

Ա՜յ պօլիտիկօսի աշխարքումը տէհէք թէ ինչ բանիր կան էս սահաթիս։

Գասպար Կոլյատուցեանց



## ԱՐՑՈՒՆՔ ՆՈՒ ԺՊԻՑ

Ես քեզ կը տամ արցունք պարգեւ՝
Դու ինձ ժպիտ—փոխանակ,
Իմ արցունքը լինի անծրեւ,
Քո ժըպիտը արեգակ։
Անվերջ լացով ողողեցան
Սըրտիս բոլոր անկիւններ
Եւ անանձրեւ թառամեցան
Իմ նոր բուսած յասմիկներ,
Քո երկրնքում չըկան ամպեր,
Երաշտութիւն է տիրում.—
Այն մեծաշուք ծարաւ վարդեր
Որ չորանան քո սրտում։
Այն վարդերը ջուր են ուզում,
Յասմիկներս—ճառագայթ...
Ես լալիս եմ, միշտ արտասւում.
Դու խընդում ես անընդհատ։
Ես քեզ կըտամ արցունք պարգեւ,
Դու ինձ ժպիտ փոխանակ,
Իմ արցունքը լինի անծրեւ,
Քո ժըպիտը արեգակ։

Սեւան Նախշի

## ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՋՐԱԲԱՇԽԱԿԱՆ IX ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կիրակի, մարտի 15-ին, Արտիստիք. ընկերակցութիւն, ... Ռուսական ջրաբաշխական IX համագումարի հանդիսաւոր բացումը, որին մասնակցեցին, բացի պաշտօնական անձերից, Ռուսաստանի և Կովկասի քաղաքներից հաւաքուած մօտ, 250 ներկայացուցիչներ։

Պաշտօնական ճառերից յետոյ ինժ. Կուրգինեանն կարդաց «Պատմական ակնարկ Թիֆլիզ քաղաքի ջրաբաշխութեան զարգացման»

Ողորմած տիկնայք և յարգելի պարոնայք.

Դեռեւս անյայտ ժամանակներից, Թիֆլիզի ազգաբնակութիւնը օգտւում էր Կուր գետի ջրից, որ սկիզբն է առնում համարեա Տաճկական սահմաններում և հասկյով զանազան վայրերով, թափւում է Կասպից ծովը։

Կուր գետի մէջ թափւում են նոյնպէս բաւական թւով գետակներ, առւակներ, աղբիւրներ, աղբիւրներ՝ բնական և արհեստական, այլ և այն բոլոր քաղաքների և գիւղերի աղտոտութիւնները, որոնց մօտով անցնում է Կուրը։ Եւ այդ ջուրը գործ էր ածւում Թիֆլիզեցոց բոլորի տներում։ 1886 թւին՝ քաղաքային վարչութիւնը մտածեց քաղաքի համար մի օգտակէտ ձեռնարկ բաւերծել և մտածեց ու գտաւ, որ եթէ ջրմուղ չինէ, դա բաւական օգուտ կը բերէ քաղաքին։

Եւ իրօք, ջրմուղը քաղաքային վարչութեան տալ է 2,000,000 րուբլի զուտ արդիւնք ազգաբնակութիւնից հաւաքած, բացի այն նախաններից, որոնք հաւաքելու են մեր գումայի հարուստ ձայնաւորներից, այլ և այլ հարուստներից ու հաստատութիւններից։

Այդ այդպէս է։ Անկասկած ջրմուղը լաւ բան է, բայց ձեռքս կրծքիս վրայ դրած պատիւ ունեմ զեկուցանել, յարգելի պարոններ և ողորմած տիկնայք, որ դուք հենց այսօր էլ փառաւորապէս մաքրազարդում էք այն ջուրը, որտեղ թափւում են Ախալցխայի, Արտահանի, Բորժոմի, Արտաթումանի, Խաշուրի, Գորու, Մցխէթի և այլ շատուշատ տեղերի աղտոտութիւնները։

Թէև մեր ջրմուղը կոչւում է Աւճալեան աղբիւրներից, բայց քանի որ Աւճալում եղած աղբիւրները, հազիւ կարող են քաղաքային վարչութեան անդամների գլխները մաքրել, մենք բարւոք ենք համարում, կրկին նոյն Կուրի շաղ և բազմազան բաղադրութիւններով հարուստ ջուրը մատակարարել 200,000 ազգաբնակութեան։

Եւ գոհութիւն Աստուծոյ, ինչպէս տեսնում էք, այդ ջուրը այնչափ էլ չէ վնասում ազգաբնակութեան առողջութեան։

Ամառները, ամբողջին թող փչելու համար, երբեմն ջուր չենք թողնում քաղաք և քաղաքացիները կարծում են, որ Աւճալայի աղբիւրները ցամաքել են երաշտից։

Հրաշալի է, չէ՞։

Եւ դա հարկաւոր է այդպէս անել, որովհետև, իս չենք կարող հասարակութեան անդադրում ջուր տալ, թէկուզ հենց Կուրի, չէ որ մեր ջրմուղը էլ էն պրէտախմը չի ունենալ։

Կուր գետի ջուրը նրանով էլ լաւ է, որ խիստ առողջարար է. հարուստ մարդուն շատ է հաստացնում, իսկ աղքատին միշտ որ օգնում է—թէ և այն էլ կարելի ասել, Կուր գետի ջուրը համարեա բուլիօնի տեղ է բռնում հասարակութեան համար՝ իր թանձրութեամբ և չաղութեամբ։

Խօսքերիս ապացուցմունք՝ փաստերը ակներև է։

Համեցէք, ճաշակեցէք և փորձեցէք։

Ակնարկու Ծի

## ՍԽԱԼՆ ՈՒՂՂԵՑ

Արտասահմանում մի տեղ գինւորական օրէնքը հրամայում է, որ պահակ ենթասպայի հետ խօսելիս, անւանէ նրան «դուք»։

Մի սպայ վարժութեան ժամանակ բարկանալով ենթասպայի վրայ, մօտեցաւ նրան և ասաց

—Դու-յիմա՛ր աւանակ։

—Թոյլ ուէք նկատել—պատասխանեց ենթասպան,—որ օրէնքով պէտք է ասել.—դո՛ւք—յիմա՛ր աւանակ։

## ԱՐԱԳ ՎՃԻՌ

Մի մարդ իր նորածին երեխայի համար վարձեց մի ծծմայր, որը մի շաբաթ չափ կերակրելուց յետոյ, դըրժեց պայմանը, ձգեց երեխային ու հեռացաւ։

Երեխայի հայրը դիմեց դատարան. դործը վճռեց և վերջը դատաւորը պարտաւորեցրեց ծծմօրը շարունակել ծիծ տալ երեխային։

Իսկ այդ ժամանակ երեխան արդէն 27 տարեկան էր...

## ՆԱՄԱԿ ԳԻՒՂԻՑ

Իմ ազիզ դուստա, Արշակ ջան։

Ստացայ քո գրած նամակը, որով փող ես պահանջում, աստուծոյ շնորհակալեմ։ Ու ինձ էլ գրում ես, «աչքդ լոյս լինի հայրիկ, փախվել եմ շեստօյ կլասը»։ Ա՜յ որդի, այդ մի լաւ խաբար չէ, որ դու գրել ես. այսքան տարի սովրում ես, ամայ տեսնում եմ բէքեարա սովրողներից ես, չես կարողանում փետվօյ կլասը նստել։

Ես էլ ուրախացայ, որ այս տարի փետվօյ կլասը տակն ու վրայ կանես կը գաս, բայց ինչպէս տեսնում եմ հոլոն, չէ, չէ՛ր կայ որ փետվօյ կլասի պատերին հանես։

Քո հայրիկ Մելքոն

## ԵՐԿՈՒ «ԵՍ»

(Ռուսերէնից)

Հոգույս խորքում հեռաւոր,
Երկու «ես» կան թագաւոր,
Մէկը սառում է անյագ,
Միւսը սիրում անյատակ։

Մէկը լի է հաւատով,
Վառ վարդագոյն յոյսերով.
Միւսը անյոյս, անհաւատ
Խարխափում է անընդհատ։

Լ.

## ՌՎԷՄԵՂԱԻՈՐ

Բագւում բարեկենդաններին մի 12 տարեկան աղջիկ են պսակում 26 տարեկան երիտասարդի հետ. աղջիկը չդիմանալով ամուսնական կեանքին, 4—5 օրից մեռնում է։

Մամուլը, հասարակութիւնը, հասարակութիւնը՝ որ գուցէ և քէֆ է արել հարսանիքում, բողոք են բարձրացնում պսակող քահանաների անփութութեան վրայ։

Քահանաները՝ Տէր Արշակը և Տէր Ներսէսը, մեղքը մէկը միւսի վրայ են գցում և մատնանիշ են անում տեղական մի բժշկապետի վկայութեան մասին։

Եւ այդ առթիվ է, որ Բագւի մարդասէրները ներկայիս զբաղւում են. այն բագուցիները, որոնք սովոր են տեսնել հարիւրաւորների կոտորած և հազարաւորների արցունք։

Եւ հիմայ չեն կարողանում մեղաւորին գտնել։

Տիմարները մոռանում են իսկական մեղաւորին—դա աղջիկն էր որ պառկեց... և չորս օրից յետոյ մեռաւ։

Փեսային հարկաւոր էր «պատիկ» աղջիկ՝ նա գտաւ։

Աղջկայ ծնողներին մի մարդ, ու մի աւատող բերան իրենցից հեռացրին։

Տէրտէրներին փող և պսակելու... և թաղելու։

Բժշկին նոյնպէս փող, սուտ վկայութիւններ տալու։

Իսկ մամուլին՝ խօսելու առիթ։

Ոչինչ։ Մեղաւորն էր... մեռնող աղջիկը։

## ՖԵԼԻԷՏՕՆ

### ԳՕԳՕԼ

### „Քիթ“

(Ծննդեան հարիւրամեակի առթիւ)

II

Կոլեժսկի ասեսոր Կովալեովը բաւական վաղ զարթնեց ու շրթունքներով բր՛ր... արաւ, որ միշտ զարթնելիս անում էր, թէպէտ չէր կարող բացատրել, թէ ինչ պատճառով էր անում։ Կովալեովը ձգձգուեց, հրամայեց իրան տալ սեղանի վրայի փոքր հայելին։ Նա կամենում էր երեկ երեկոյ քթի վերայ բուսած պզուկին նայել, բայց ի մեծ զարմանս իւր տեսաւ, որ քթի տեղը բոլորովին հարթ՝ հաւասարել է։ Կովալեովը վախեցած, հրամայեց ջուր տալ, անձեռոցիկով սրբեց աչքերը. իսկապէս քիթը չկար։ Նա շօշափեց ձեռքով, կամենալով իմանալ, քնած խօ չէ, կարծես քնած չէ։ Կոլեժսկի ասեսոր Կովալեովը մահճակալից վար թռաւ. թափահարեց իրան, չէ, չկայ ու չկայ քիթը։ Հրամայեց շորերը տալ հագնելու և թռաւ ուղղակի օբեր-պոլից-էյմեստերի մօտ։

Սակայն, ի միջի այլոց, անհրաժեշտ է մի բան ասել Կովալեովի մասին, որպէսզի կարդացողը տեսնի, թէ ինչ տեսակ կոլեժսկի ասեսոր էր սա։ Կոլեժսկի ասեսորները, որ այս կոչումն ստանում են ուսման վկայականով, չպէտք է համեմատել Կովկասում կոլեժսկի ասեսոր եղածների հետ։ Սրանք բոլորովին երկու տարբեր ցեղեր են... Բայց Ռուսաստանն այնպիսի հրաշալի երկիր է, որ եթէ մի բան ասես մէկ կոլեժսկի ասեսորի մասին, բոլոր կոլեժսկի ասեսորները, Ռիգայից մինչև Կամչատկայ, իրանց վերայ կառնեն, միևնոյնը հասկացիր և բոլոր կոչումների ու աստիճանաւորների համար։ Կովալեովը Կովկասեան կոլեժսկի ասեսոր էր։ Նա ընդամենն երկու տարի էր, որ այդ կոչումն ստացել էր և դրա համար էլ, ոչ մի վայրկեան չէր մոռանում, բայց որպէսզի աւելի կշիռ ու շուք տայ իրեն, երբէք չէր անուանում պարզապէս կոլեժսկի ասեսոր, այլ միշտ մայոր էր ասում։ «Լսիր, աղաւնեակս», սովորաբար ասում էր նա փողոցում պատահած շապիկ ծախող կնոջը, «դու արի տունս, բնակարանս գտնւում է Սադովայա փողոցում, լոկ հարցրու, որտեղ է ապրում մայոր Կովալեովը, ամենն էլ քեզ ցոյց կը տան»։ Եթէ պատահում էր մի քիչ գեղատեսիլ, այդ դէպքում բացի դրանից, գաղտնի հրամայում էր. «Հոգիս, դու հարցրու մայոր Կովալեովի բնակարանը»։ Այդ իսկ պատճառով էլ, կոլեժսկի ասեսորին մենք կանուանենք այսուհետև մայոր։

Մայոր Կովալեովը սովորութիւն ունէր ամեն օր Նևսկի հրապարակում զբօսնելու։ Նրա վերնաշապիկի օձիքը չափազանց մաքուր էր ու օսլայած։ Նրա բակենբարդները այն տեսակից էին, որ հիմայ էլ կարելի է տեսնել նահանգական ու գաւառական երկրաչափների, ճարտարապետների, զինուորական բժիշկների. նոյնպէս զանազան պաշտօնակատարների ու ընդհանրապէս այն բոլոր տղամարդկանց երեսին, որոնք լիքը կարմիր թշեր ունեն ու շատ լաւ բոստոն (վիստոն) են խաղում։ Այդ բակենբարդները սկսում են թշերի կէսից և ուղղակի գալիս հասնում են մինչև քիթը։ Մայոր Կովալեովը ժամացոյցի շղթայի վրայ կրում էր բազմաթիւ կնիքներ ու սրտիկներ, զինանշաններով ու վերնագրերով՝ չորեքշաբթի, հինգշաբթի, երկուշաբթի և այլն։ Մայոր Կովալեովը Պետերբուրգ եկել էր հարկաւորութիւնից ստիպւած,—այսինքն իւր կոչմանը վայելուչ տեղ գտնել, եթէ յաջողւէր փոխնահանգապետութիւն, իսկ եթէ ոչ, էկզեկուտորութիւն, մի որևէ յայտնի դեպարտամենտում։ Մայոր Կովալեովը հակառակ չէր և ամուսնանալուն, եթէ պատահէր, նշանածն ունենար երկու հարիւր հազար դրամագլուխ։ Դրա համար էլ ընթերցողն, ինքը կարող է դատել, թէ ինչ էր մայորի դրութիւնը, երբ նա տեսաւ իր չափաւոր քթի տեղը յիմարագոյն, հարթ ու հաւասար տափակութիւն։

Կարծես անբաղդութիւնից, ոչ մի կառապան փողոցում չէր երևում. նա ստիպւած էր ոտքով գնալ, փաթաթւելով վերարկուի մէջ և քիթը թաշկինակով ծածկած, ցոյց տալով իբր արիւն է հոսում։ «Գուցէ ինձ այդպէս թւում է, չի կարող լինել որ այդպէս յիմարաբար քիթը կորչի», մտածեց նա և մտաւ խմորածախի մօտ, յատկապէս հայելու մէջ նայելու։ Բարեբաղդաբար այն-

# ՏԵԼԷՖՈՆ

I

Ծը՛ռ՛ռ՛... Ցենտրալնի՞... գայթէ պաժալուստա նօմեր դվեստիօրօկ... դա, դա, դվեստիօրօկ... գաւօվօ. մերսի։

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... «Մշակ»-ի խմբագրատո՞ւնն է. հա՜... մանրավաճառ Գէորգը խնդրում է ուղարկել իրեն, հարիւր փութ ծխացած համարներից... այո, այո... ինչպէս... լսում եմ. դուք ասում էք, որ բոլորը վերցնի... եթէ էլի քսան տակառ գիջում կանէք՝ ասում է, որ բոլորը կը վերցնեմ... այո, նոյն խակ նոր տպւող համարները... շատ լաւ. մերսի... ցտեսութիւն...

—

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... գայթէ պաժալուստա չետատարիդցատ... բլագադարիւ վաս։

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... բժիշկ Վիգիտեանը տա՞նն է. Նեղութիւն կրէք խնդրեմ կանչել նրան ապարատի առաջ... ոչինչ-ոչինչ, կը սպասեմ։

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... պարոն Վիգիտեան դուք Հ՞ք. գիտէք, պարոն բժիշկ, այն ինձնուն տարեկան ծերունի հիւանդը, որ դուք այսօր առաւօտեան այցելեցիք, վախճանուեց, վաղը նեղութիւն չը կրէք այցելելու... ինչպէս... ափսոսո՞ւմ էք... չէ՞ս Հք ափսոսում... այո, ես ձեզ հասկանում եմ, դուք գոնէ տամնեհինգ վիզիտի յոյս ունէիք... ցտեսութիւն, ցտեսութիւն։

—

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... Ցենտրալնի՞. սեեդինինիէ պաժալուստա լեչերնիցա Նաւասարդեան... ուժէ՞... սպասիբօ։

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... պարոն բժշկապետ, այս երեկոյ խնդրում ենք բարեհաճէք մեր ժողովին... ինչ ժողո՞վ... պարոն Գ-ն վախճանուեց... այո, այսօր ցերեկւայ ժամը տասնուզում ենք թաղման ծրագիր կազմել... ը՛ը՞... կը սկսենք մօտաւորապէս գիշերւայ ժամը ութից... ասում էք ո՞րտեղ... որտեղ միշտ ծրագրում ենք յօբելեաններն ու թաղման հանդէսները... կը սպասենք... ո՛չ, առանց ձեզ չենք սկսի... ի հարկէ, ի հարկէ, դուք լաւ էք հասկանում... ցտեսութիւն։

—

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... գայթէ պաժալուստա մագազին Բայանդուրովա... գատո՞վօ... մերսի...

Ծը՛ռ՛ռ՛ռ՛... ո՞րտեղից էք խօսում... Բաւանդուրովի խանութից... պարոն Սուրէն դո՞ւք էք... Բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է ուղարկել ձրի ճաշարանի համար, տասը փութ բրինձ և հինգ փութ ձէթ... Ն ի ս ի ա... ոչ, փողը այսօր չեն կարող վճարել... որովհետև անցած շաբաթւայ երեկոյթից ստացւած հասոյթը հազիւ նոյն գիշերւայ մարօժնու և զանազան քաղցրեղէնների ծախսերը ծածկեց... մանաւանդ խմբագիրները ու ձրի տոմսակով եկածները, որ իմացան թէ բուֆէտը մուքթայ է, կէս ժամւայ մէջ մաքրագործեցին եղած չեղածը... երկրորդ անգամ մտադիր ենք երեկոյթ տալ, որի մուտքից ձեր պարտքը անպատճառ կը վճարենք... մեր կողմից խնդրեցէք Անտօն Սօլոմոնիչին... ցտեսութիւն։

Օօխար

## ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Հաշտարար դատաւորը կոզոպուտի փորձանելու մէջ մի մեղադրւող մարդու հարցրեց.

—Ի՞նչն ստիպեց ձեզ դիմել մի այդպիսի յանցաւոր փորձի։

—Սովորութիւնը։

—Ի՞նչպէս թէ սովորութիւնը։

—Այո, հէնց այդպէս. առաջ ես պահում էի բանկային կանտօրա։



տեղ ուրիշներ չկային, երեխաներն ալւում էին սենեակներն ու աթոռները զարդարում, մի քանիսը քնած աչքերով, մատուցարաններով դուրս էին բերում տաք-տաք հրուշակներ, աթոռների ու սեղանների վերայ թափթփած էին երեկւայ կօֆէով կեղտոտւած լրագիրները։ «Է, փառք Աստուծոյ, ոչ ոք չկայ», արտասանեց նա, «հիմայ կարելի է լաւ նայել»։ Նա վախվխելով մօտեցաւ հայելուն և նայեց։ «սատանան գիտէ, թէ ինչ մուտտո բան է եղել», արտասանեց նա թքելով, «գոնէ մի բան լինէր քթի տեղ, թէ չէ բոլորովին դատարկ է»։

Բարկացած, շրթունքները խածոտելով դուրս եկաւ խմորածախից և վճռեց հակառակ իր սովորութեան, ոչ ոքի վերայ չնայել ու չժպտալ։ Յանկարծ նա քարացած կանգնեց, մի տան դրան մօտ՝ նրա աչքին մի անբացատրելի երևոյթ կատարուեց։ Մուտքի մօտ կանգնեց մի կառք. դռները բացուեցին, միջից դուրս թռաւ կորացած, նշանաւոր հագած մի պարոն և սանդուխներով վեր վազեց։ Ինչ տեսակ եղաւ Կովալեովի երկիւղն ու զարմանքը, երբ ճանաչեց, որ նա իր սեփական քիթն էր։ Այդ անբնական տեսարանին, կարծես ամեն բան նրա աչքերում շարժւեց, նա զգում էր, որ հազիւ կարողանում է կանգնել, բայց վճռեց, ինչ էլ կուզէ լինի, սպասել նրա կառք վերադառնալուն, ամբողջ մարմնով դողալով ինչպէս ջերմերից։ Երկու րոպէից յետոյ քիթն իսկապէս դուրս եկաւ։ Նա նշանազգեստով էր, բարձրադիր ոսկերանուկ օծիքով, հագել էր Նրբակաչի անդրվարտիք և կողքին թուր էր կախած։ Գլխարկի արդուզարդից կարելի էր եզրակացնել, որ ստատսկի սովետնիկ էր։ Ամեն ինչից երևում էր, որ նա այց էր կատարում։ Նա նայեց շուրջը, բղաւեց կառապանին «մօտ եկ», նստեց ու գնաց։

Խեղճ Կովալեովը հազիւ խելքը չը թռցրեց։ Նա չգիտէր, թէ ինչ տեսակ մտածէ այս տարօրինակ անցքի մասին։ Արդ, իսկապէս, ինչպէս կարող է լինել, քիթը, որ դեռ երեկ երեսին էր, որ ոչ ոտքով կարող է ման գալ, ոչ կառքով, պաշտօնազգեստ հագնի։ Նա վազեց կառքի յետևից, որ բարեբաղդաբար շատ չէր հեռացել և կանգնել էր Կազանսկի տաճարի առաջ։

Նա շտապեց տաճար, անցաւ երեսները կալած, աչքերի տեղը միայն երկու ծակ թողած աղքատ պառաւների շարքից, որոնց վերայ միշտ ծիծաղում էր ու մտաւ եկեղեցի։ Եկեղեցու մէջ աղօթողները քիչ էին, նրանք բոլորը կանգնած էին դռների մօտ։

Կովալեովն զգում էր, որ այնքան յուզւած է, որ չի կարող աղօթել։ Նա պարոն քթին էր որոնում բոլոր անկիւններում և վերջապէս տեսաւ մէկ կողմում կանգնած։ Քիթը բոլորովին ծածկել էր երեսը բարձրադիր օծիքի մէջ և մեծ բարեպաշտութիւնով աղօթում էր։

«Ի՞նչպէս մօտենալ», մտածում էր Կովալեովը, «պարոնի պէս է հագնւած և այն էլ ստատսկի սովետնիկ»։

Նա քթի մօտ կանգնելով սկսեց հազալ, բայց քիթը մի վայրկեան էլ չփոխեց դիրքը և շարունակ ծնրադրում էր։

«Ողորմած տէր», ասաց Կովալեովը կամենալով իրան սրտապնդել, «ողորմած տէր»...

—«Ինչ էք կամենում», հարցրեց նա շրջելով Կովալեովի կողմը։

—«Ինձ համար տարօրինակ է, ողորմած տէր... ինձ թւում է․․ դուք պէտք է գիտենաք ձեր տեղը։ Եւ ես ձեզ գտնում եմ յանկարծ, ո՞րտեղ—եկեղեցում։ Համաձայնեցէք»...

—«Չեմ իմանում, ինչ էք բարեհաճում խօսել... բացատրեցէք։

«Ի՞նչպէս բացատրեմ», մտածում էր Կովալեովը և սրտապնդուելով սկսեց. «ի հարկէ ես... սակայն ես... համաձայնեցէք, որ ես Վոսկրեսենսկի կամուրջի վերայ կպճած ապելսին ծախող պառաւների պէս, չեմ կարող առանց քթի մնալ։ Մի դէմք, որ սպասում է նահանգապետի պաշտօնի, անկասկած հետևում է․․ Ես չգիտեմ, ողորմած տէր, (այդ ժամանակ մայեօրն ուսերը թօթուեց)... Ներեցէք... եթէ այս բանին նայելու լինենք համաձայն օրինաց պարտքի և պատւի... դուք ինքներդ կարող էք հասկանալ»...

—«Դրականապէս ոչինչ, բացատրեցէք աւելի հասկանալի»,

Կը շարունակուի

## ԲԺՇԿԻ ՄՕՏ

Գ. բժիշկ, արդեօք դուք չէք կարող մի այնպիսի դեղ գրել, որ հիւանդութիւնս մի անգամից անցնի։

—Կարողանալը՝ կարող եմ. բայց եթէ ես ձեզ համար նշանակեմ մի այդպիսի դեղ՝ դուրս կը գայ, որ ես ինքս իմ թշնամին եմ... ընդհակառակը, լաւ բժիշկը պէտք է աշխատի, որ իր հիւանդը յաճախ այցելութեան գայ իրան մօտ—խորհրդի։

## ԴԷՄԻՑ ԴԷՆԻՑ ՀԱՒԱՔԱԾ

—Կնոջը համակրանք—սէր արտայայտել, միեւնոյն է թէ՝ շոգեկառքին մի քանի տասնեակ ծանրաբեռնուած վագոններ կցել։

—

—Նշանուել՝ միեւնոյն է թէ՝ մի մեծ պարտք վերցնելու համաձայնութիւն կայացնել։

—

—Ամուսնանալ—պսակուել՝ միեւնոյն է թէ՝ ստորագրել մի պարտամուրհակի տակ, որի մէջ տուած պարտքը, երբէք տալ չի կարելի։

—

—Երեխաներ ունենալ՝ միեւնոյն է թէ՝ տալ ունեցած ամբողջ կարողութիւնը, պարտքի տոկոսի մի մասի փոխարէն։

—

—Դեռ չամուսնացած մարդը, նման է այն ճանապարհորդին, որը դեռ չէ հասել կայարանին։

—Ամուսնացած ու դեռ երեխաներ չունեցող մարդը, նման է, այն ճանապարհորդին, որը երկաթուղու վագոնումն է բայց դեռ չի հասել սպասած կայարանին։

—

—Ամուսնացած ու երեխաների տէր մարդը, նման է այն ճանապարհորդին, որը հասել է սպասած կայարանին ու իրեղէնները շալակած իջնում է վագոնից։

Հաւաքեց երկու Շ.



## ՕՊԵՐԱՑԻՈՆ

—Գ. Համբարձում, այսօրուայ օպերան ինձ վրայ միանգամից հիանալի տպաւորութիւն է թողնում։

—Իսկ ինձ վրայ ընդհակառակն։

—Ինչո՞ւ

—Որովհետև, մուզիկը խանգարում է։

—Իսկ եթէ չլինէր մուզիկը, կարող եմ ասել, որ տպաւորութիւնը մի անգամից սարսափելի կը լինէր։

Բանտի կառավարիչ.—Գ. Ներսիսեանց, ձեր բերդարգելութեան ժամանակը վերջացաւ և այժմ ազատ էք. գուցէ ունէք որևէ բան մեզ յայտնելու։

Բանտարկեալը.—Պարոն կառավարիչ, իմ բերդարգելութեան միջոցին, ինձ մի այնպիսի լաւ սենեակ էր վիճակուել, որ ես կը խնդրէի ձեզ... պահէիք հետեւեալ անգամւան բռնուելուս ժամանակ։

—Պարոն պրոֆէսոր, թողնելով ձեր տունը, որտեղ ես շատ հաճելի րոպէներ եմ անցկացրել՝ կուզենայի յիշատակի համար մի փոքրիկ բան վերցնել հետս...

—Այո՛, այո՛, ի հարկէ։ Ընտրեցէք իբրև յիշատակ, ինչ որ ձեզ հաճելի է։

—Այդ դէպքում, պարոն պրոֆէսոր, թոյլ տուէք ձեր աղջիկ Լիզային...

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Դ ե ր բ ե ն դ. Մէշէդին.—Կարգադրուած է Ձեզ թերթ ուղարկել։ Գրեցէք, եթէ յարմար և անաչառ երգիծանք են, կը տպենք։

Ե ր և ա ն Մ. Աֆրիկեան.—Ձեր հասցէով շաբաթաթերթը փոխեցինք Երեւան։ Բարեհաճեցէք ուղարկել 40 կ. մարկաներ, ձեզ վրայ նախա շատ կայ հասցէներ փոխելու պատճառով։

Բ ա գ ո ւ Ալ. Ազիտօն.—Բանաթուր։ Ձեր գրած «Օրթնութիւնի մի թեթև կոնտակ»ը, եթէ կամենում էք, կը հրատարակենք, միայն ձեր իսկական ստորագրութիւնով։

Տաճկաստան

Այն բոլոր հաստատութիւններին, գրադարաններին ու անձանց, որոնք գտնւում են Տաճկաց սահմանադրական կայսրութեան մէջ եւ մեզանից խնդրում են ձրի «Խաթաբալա».—Ուրախ ենք, որ սահմանադրութիւն հռչակուեց Տաճկաստանում և հնարաւորութիւն ունէք ազատ ընթերցարաններ, գրադարաններ հիմնել, «միթինգ» ու «համալսարաններ» կազմակերպել։ Շատ ուրախ ենք, կրկին ուրախ ենք, երանց ուրախ ենք։ Բայց վկայ է աստղը կէս գիշերային, որ մենք ոչ մի բանի մէջ մեղաւոր չենք, ոչ ձեր ազատագրութեան, ոչ կոտորածների և ոչ դժբաղդութիւնների մէջ, ու հաւատացնում ենք բոլոր սրբերով, որ շատ ու շատ ուրախ ենք ձեր ազատագրութեանը։

Բայց, սիրելի էֆենդիներ, մեր շաբաթաթերթի մեղքի համար, մեզանից այդքան ձրի թւով «Խաթաբալա» էք պահանջում։ Միթէ ամբողջ Տաճկաստանում չճարուեց 1½ թերթ կարդացող, որ փողով պահանջէր։

Հաւատացէք, ճիշտ ենք ասում, մենք էլ, մեր հայրերն էլ, մեր պապերն էլ, անգամ մեր նորոգ հանգուցեալ տատերն էլ՝ քելեխին խիստ հակառակ ենք, թէ գործով, թէ մտքով, սակայն չենք կարող սկզբունքային հարցերը շփոփխաւ չինել, ինչպէս միւս կազմակերպութիւնները։

Բացի դրանից, խմբագրութիւնս, մօտ հարիւր տեղ ձրի թերթ է ուղարկում։ Դա մեզ էլ, ձեզ էլ բաւական է։

Այնուամենայնիւ, Աստուած է վկայ, որ ձեզանում սահմանադրութիւն հրաչակուելուն անհունապէս ուրախ ենք։

Ն ո ր-Ջ ո ւ ղ ա. Ար. Աթայեան.—Համաձայն ենք—եթէ մեզ յարմար լինի։ Բարեհաճեցէք ուղարկել, տեսնենք։ «Ջուկը ջրի մէջ չի գնահատուիլ»։

Ա խ ա լ ց խ ա. Ցօղամաթրերին.—Հրաժարւում ենք տեղ պատրաստել մեր սապերների համար։ Նրանք կը գան պեղումներ անելու և անպատճառ կը գտնեն «բաւթառ չան գլուխը», որ տեղից գպրոցների հիմնարկութեան օրից, թաղուած մնացել է անգիւտ։



—Աղի, էտ խի՞ էս դունչդ կախած ագաքս ցից ըէ...

—Վա՜յ... քմաաաղ ըլի նանը, բա խօ ախըս խալխին շանց չեմ տալու...

—Է՜... աղի ջան, էլի հին խելքի ես մնացել, տնաշէն, տեսնըմ չե՞ս պըրաս ինց եմ դուս գցե՞... Թիփլիզ ախչկերքը դոշները չիմ բաց-բաց են ման գալի... դու նհէ ես դունչդ կալնէ, կասես բերնումդ գողցած բան ըլէս պահած...

—Ա քմաաաղ, դէ Թիփլիզեցոց բանը ջոգ ա. նրանք իրանց մարթկերանց էլ են թողնում փախչըմ։

# ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

Նիկոլայեւսկի կա- **ԱՌԵՒՏՐԱԿ. ՏԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ** մուրջ տուն Քամոյեւի

# ԼԻԿՎԻԴԱՑԻԱ

## Օ Գ Տ Ւ Ե Ց Է Ք   Դ Է Պ Ք Ի Ց

Հազար իննհարիւր ու ինն թւից,
Գարնան Մարտ ամսի տասներկու օրից.
Մենք մտածել ենք ԼԻԿՎԻԴԱՑ անել
Եւ մեր խանութի ապրանքը ծախել
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Ուստի այս օրից, ով Թիֆլիզեցիք,
Եթէ խելք ունէք և ճաշակով էք,
Համ էլ ուզում էք սիրուն բան հագնել,
Մեր Առեւտրական Տունը համեցէք.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Մենք ունենք այսպէս կանանց զգեստներ,
Այր մարդկանց համար սիրուն հագուստներ,
Երեխաների շորեր ճաշակով.
Անհատնում, բազում էժան գներով.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Մենք վաճառում ենք տասնց մի շահի,
Միայն ձեր օգտին զիջում ենք փասի.—
Ինչու որ, գործը ուզում ենք փակել,
Եթէ խելք ունէք, օգտուեցէք դէպքից.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Եւ որ հաւատաք, թէ ճիշտ ենք ասում,
Խնդրում ենք անձամբ գաք ու համոզուէք.
Տեսէք գները ու մտածեցէք
Էլ որանից էժան կարո՞ղ է ծախուել.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Եթէ կը գնէք—մենք կը վաճառենք
Եւ մեր խանութի բոլոր սարք ու կարգ.
Շկաֆ հայելի, կասսա ու գարակ.
Առեւտրատունը հիմքից բարեկարգ.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից և աճապարէք,
Նիկոլաեւսկի կամուրջով անցէք,
Յակոբջանեանների և Սարգսեանցի
Առեւտրատունը դուք մի մոռացէք.
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից, օգտուեցէք դէպքից,
Եթէ խելք, ճաշակ, փողի զաղը ունէք.
Դուք անմիջապէս մեզ մօտ համեցէք
Եւ Զատկի համար էժան զուգուեցէք՝
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.





## ԱԼՄԵԶԱ

ՉԼՍՈՒԱԾ ՄԻՋՈՑ ԱՃՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ.

Ալ. երկու շաբաթում հանգստացնում է տառապողը.
Ալ. բուժում է լնդերքի հիւանդութիւններն և կանգնեցնում է արիւնը.
Ալ. ամրացնում է լնդերքն ու ատամները.
Ալ. բամբակայից յետոյ ատամները չեն ցաւում.
Ալ. ռա. միջոց ոչնչացնում է բերնի հոտը.
Ալ. անհրաժեշտ միջոց է ամեն մի ընտանիքում.
Ալ. ահրաժ. միջոց է ճանապարհորդ. ժամանակ.
Ալ. բաղմաթիւ չնորհակալական նամակներ.
Ալ. բաղմաթիւ բժիշկներ ցուցահանդէսներում.
Ալ. գործածելուց այս միջոցով բուժւում ենք ձկի, որովհետև բոլորին հասնել. նրա բաժինը լինելու.
Ալ. բաշխարարներ վաճառւում Աշխարաձէի դեղատանը, Թիֆլիս.
Ալ. խնդրում ենք չշփոթել ատամի ուրիշ դեղ. հետ.
Ալ. կարելի է ստանալ գլխաւոր պահեստից.

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

Փոքրն. աբ. գինն է 40 կ., հարմար. տուփը 1 ր. 20.
Ներկայացուցիչ՝ ամբողջ. Կովկասի և Անդրկասպեան երկրի Ի. Դ. Աշխարաձէ.

Թոյլատրւ. մաքրագ. բժ. վարչ. վկ. № 347.



**ПОЧЕРКИ**

Самые неправильные и скверные исправляю ЗАОЧНО каждому въ 1 урокъ. На бѣглые конторскіе и вполнѣ красивые. Пробное письмо шрифтовъ образцы почерковъ и условія высылаются за 5 семи-коп. марокъ. Обращайтесь по русски по адресу: профессору каллиграфіи А. Коссодо, Дерибасовская домъ АРМАНА ОДЕССА



PARFUM CORDIALE № 4711

ԳՈՀԻ «ԿՈՐԴԻԱԼ»

Նրբագոյն մաքրայինն զուխի, հոտի հրաշալի և անուշ լինելու պատճառով չունի իր նմանը.

ՖԵՐԴ ՄԻՒԼՀԷՆՍ

Քէօլն Ռեյնի վրայ

Ներքին Կայսերական Բարձրութեան մատակարար.

Ծախւում է ամեն տեղ

**Ферд. Мюльгенсъ.**

Кельнъ н|Рейнѣ отд. въ Ригѣ



Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ

## ԿԼԻՇԷՆԵՐ

մատչելի գներով ստանալ ցանկացողները դիմեն՝

Фото-цинкографія

С. Согомонянца

Тифлисъ, Базарная № 20



ԵՂԲ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆՑՆԵՐԻ

## ԿԱԶՄԱՏՈՒՆԸ

(переплетная)

Դվորցովայա փ. տ. Վրաց Ազնուականների երկրորդ խրկ.

Ընդունում ենք պատուէրներ ամեն տեսակ գրքերի և բրօշիւրների կազմեր, ալբոմներ, պապկաներ և այլն։

**ԳՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ**

# ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ

# ԳՐԱՄՄՕՖՕՆ

# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ, ԳՈԼՕՎԻՆՍԿԻ ՀՐԱՊԱՐԱԿ № 9.

Ո՞վ է պահպանում հաւաքոյթներում կենդանութիւն և ուրախ զրոյց։

Անկասկած այն գ ր ա մ մ օ ֆ օ ն ն ե ր ը, որոնք իսկական զոնօֆոնի և գրամմօֆօնի հարուստ թերթիկներ (պլաստինկա) ունին, վերան տպատպած գործարանային այս պատկերը։



TRADE MARK GRAMMOPHON

Զգուշանալով ձայնանիշներ, ամեն մէկը կարող է զուարճանալ իր տանը, գեղարուեստական երաժշտական կտորներ կատարելով, օգնութեամբ գրամմօֆօնի։

ZONOPHONE TRADE-MARK



ԻՍԿԱԿԱՆ ԳՐԱՄՄՕՖՕՆ ԻՐ ԹԵՐԹԻԿՆԵՐՈՎ ՏՆՕՂՆԵՐԸ ՉԵՆ ԶՂՋՈՒՄ

Գրամմօֆօնը դառնում է բարեկամ ամոլին, իսկ ամոլը սիրահար և բարեկամ այս անբաժան երաժշտական գործիքին։

Գրամմօֆօն սիրողների և բարեկամների ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ շատ կան խօսող մեքենաներ, իսկ «ԳՐԱՄՄՕՖՕՆԸ» միակ արտադրութիւնն է ԳՐԱՄՄՕՖՕՆ յայտնի համաշխարհային ընկերութեան Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Խարկով, Ռոստով Դ. վ., Օդեսա, Թիֆլիս և Ռուսական կայսրութեան բոլոր քաղաքների երաժշտական խանութներին։

Պահանջեցէք փետրուարի և մարտի վերջին նորութիւնների և հրատարակութիւնների ցուցակը։ Կատալոգներ, պրէյսկուրանտներ և այլն բաժանւում են և ուղարկւում ըստ պահանջման **ՁՐԻ**

ՑՈՒԱՋԻԿԱՑ ՏՕՆԵՐԻՆ, գնեցէք և ընծայեցէք իրար, ինչպէս ամենալաւ և յարմար նուէր, **ԳՐԱՄՄՕՖՕՆ**-ը իր իսկական թերթիկների փոքրիկ հաւաքածուի հետ։

Ապարատներ կան 30 ռուբլուց մինչև 100 ռուբլի և աւելի թանգ

Թերթիկները 35 կոպէկից մինչև 3 ռուբլի և աւելի թանգ

Հետաքրքրւողներին ամեն մի թերթիկ ցոյց է տրւում ՁՐԻ, ընկերութեան բոլոր խանութներում։

Գ Ն Ե Լ Ը Պ Ա Ր Տ Ա Դ Ի Ր Չ Է

Ցանկալի լսեցէք ԳՐԱՄՄՕՖՕՆ իր իսկական թերթիկներով և դուք ինքներդ կաշխատէք ձեռք բերել այն։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆՓԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

Ն ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մ Ի Ւ Ն Խ   Ե Ւ   Վ Է Յ Ս

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՄ

1888

Мебельный магазинъ

БР. ГАЛУМОВЫХЪ,

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англійскихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для передникъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спеціально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

ОСПЕННЫЙ ТЕЛЯТНИКЪ
ЖИВОПИСЦЕВА въ г. Орлѣ.



ԾԱՂԿԻ ՀՈՐԹՈՒԿ. Դէտրիտի օրւակը՝ 50 մարդի համար—25 կոպ. 25 մարդի—15 կոպ. խողովակի մէջ—5 մարդու համար՝ 5 կոպ.: Մի բուրւոյ պատառ—չի փտանում: ճանապարհածախսի համար—30 կոպ.: Երեք բուրւոց աւելի ուղղողին ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԶԵՂՉ մինչև 20 տոկոս. Հասցէն՝ Օրեօլ քաղաք. Ծաղկի Հորթուկ Ժիվոպիսցեւի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի

Կոմպլեկտներ փառաւոր կազմած

1906 թւի արժէ 5 ր.
1907 թւի » » » 7 ր.
1908 թւի » » » 7 ր.

Ցանկացողները պէտք է ուղարկեն կանխավճար 3 ր. որոնց կուղարկենք վերադիր վճարով։

ПЕРВАЯ
художественная хромо литографія
С. БЫХОВА
*Тифлисъ, Головинскій просп. около цирка*

Печатаются всевозможныя литографскія работы въ разныхъ стиляхъ.
Также всевозможныя ярлыки спеціально для водочныхъ и винныхъ складовъ и т. п.
ПО САМЫМЪ УМѢРЕННЫМЪ ЦѢНАМЪ
**Работы исполняются лучшими европейскими мастерами**


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ
Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.



**ՆԱԽՈՐԴԿԱՑԵԱՑԻ ԽՈՒՄԲԸ**

Անդրէևի Սև դիմակներ—(Черные Маски)



Մարկիզ Լօրենցօ.— Զարմանալի է, դիմակաւոր են մարդիկ ու մտքիկ. խօսքերս ու միտքս, կին ու բարեկամ, ամէնքան, ամէնք որ շուրջս եմ տեսնում։

Ալէքսանդրապոլի բանկի հերոսները դէպի բանտ և պրօֆեսիօնալ գողերը։



—Մուկուչ, տեսնում ես, մեր հացը ովքեր են կտրում։

—Վայ անտէր մնայ դրանց ցիլինդրն ու գալուստուկը։ Որ գողութեան շնորհք էլ չունին, էլ ինչ են մեզ ամաչացնում։

## ԱԽՏԱՀԱՆԵԼՈՒ ՏԵՂԵՐ



«Թաթարալաս».—Ի՞նչ ես փնտրում, «Ծանօթ» բարեկամ։

«Ծանօթ» բարեկամը.—Գուցէ այստեղ մի բան գտնենք, որ հարկաւոր լինի տպագրելու։

«Թաթարալաս».—Անցնենք այստեղից, խիստ զարշահոտ է բուրում և ոչ մի տպագրական միջոց երբեք չի օգնի։

## ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ ԵՐՋԱՆԿԱՑԱՒ



Ախուրեան գետում նաւթի շատրւաններ են խփում, որ փոխանակ նաւթ տալու, Զատկի համար եթէ ձու տար, աւելի օգտակար և արդիւնաւոր կը լինէր։

ეროვნული ბიბლიოთეკა